

նենիրէս ետք՝ նաև Հայոց Ազգային Հոգեւոր Աւաստամարանի նիւթական և բարոյական շրջանին վրայ ուշադրութիւն դարձնել, այն քաղցր ակնարկով՝ որն որ վայել է ծամարիտ Հայու մը ապա ուրեմն, անհրաժեշտ պարուք են մեզ զոր ինչ որ գաղափար ունեցանք նորա մուաւորական և նիւթական կենաքի հմտնելուներուն վերայօք թէ բանիւ և թէ զրչով՝ ի հանդէս հանել, գոնէ առժաման համառօտապէս, իսկ ընդարձակն թողլով զինի մեր վերադարձին:

Աղէքսանդրապօլու Հոգեւոր Վարորդ յօրէ անտի հիմնարկութեան իւրոյ ցարդ, եմէ ունեցել էր իւր համար շատ մը գաստիարակիցներ և կարգադրութիւնք ու կանոնք, և քանի մը անհամուներու ևս ջամբած էր իւր ուստամասիրած կաթէն, սակայն ըստ իմ հմտութեան՝ այնպէս արդիւնաւոր չէ եղած, ինչպէս որ այժմն էր ու պիտի լինի՝ որովհետեւ նորոգ ընտրեալ Յարգոյապատիւ Հոգարարձուաց այսինքն է Բարեկրօն Կոստանեանց Յովսէփ աւագ քահանայի, Ազգասէր Պ. Սիրական Գորոյիանցի, Պ. Յարութիւն Յարութիւնեանցի, Պ. Թագէսու Տիգրանեանցի Պ. Յովհաննէս Բարայեանցի, և Պ Արշակ Արդպատրիկեանցի ընտրութեամբ Տեսչական պաշտօնի հրաւիրուած Պ.

Սարգիս Բէկնազարեանցի կարգաւորութեամբըն և զիւրինաց զասախօսութեամբն քիչ առնուան մէջ կուտայ բուսուցանել անոշահոտ վարդեր. ազգին ներկայ և ապագայ սերնդոց համար կրնայ պատրաստիլ սիտանացու և օգտակար անդամք, յուրախութիւն Աղէքսանդրապօլու ազգային Վարորդին. և աւելի փառաց պսակ կը հիւսուի նորա ճակատուն, երբ նոյն քաղաքի Հայ ժողովրդականք ևս զգան կատարելապէս ուսւման և կրթութենէ առաջ զալիք կենցաղօգուտ պարագայքն, և այնու ազնուամիտ քաղաքականութեամբ մէկ սիրտ լինելով վերոյիշեալ Հոգարարձութեան հետ, իրենց ներկայ և ապագայ սերնդոց արելաւութեան վրայ ընելիք հսկողութիւնն անխարդախ և աներկմիտ սրտով յանձնեն նոցա, և թէ անոնց յաջորդներուն Եւ այս ամեն ըսածնուս վերայ միշեալ Տեսչի յօրինուած կարգադրութիւնն, որով նոյն զպրոցն պիտի իւր զարգացումն ստանայ՝ ի գէպ ժամանակի առանձին կերպով աչքէ անցկացնելով՝ ցանկալի կը համարեմք այն ատեն մեր զնուութեան համեմատ դատողութիւննիս հրապարակաւ խօսելներէս ետք, ի լցու ընծայել զանիկ իւր բնիկ գաղափարով՝ Արբոր ամսագրոցդ միջոցով, և կամ առանձին առանձին տեսարակներ կազմելով.

Ենք կարող չյաւելացունել այս տեղ նաև եթիւ տող բան. որովհետև մէք թէպէտեւ չունեցանք միջոց մի և նոյն ատենուան մէջ գուալ նմանապէս Հայ Օրիորդաց ուսումնարանը, և նուրա մուաւորական սկզբունքներուն հմուանալ, յուսպավ թէ Մէկ Մէծապատիւ Պ. Բէկնազարեանցի

Հոգունակութեամբն օգտակար և պատշաճաւոր առարկայքն ձեռքէ պիտի շմաղուին. սակայն այս անսպայման կէտն, որ ըստ իսում տեղեկութեամբն զուցէ Բէկնազարեանցի կարգադրութեամբն չէ ու չպիտի լինի, խիստ անախորժ տպաւորութիւն ունեցաւ, թէ իմ սրտին, և թէ ինձ յարտնի եղեալ ուսումնական և բանիքուն ժողովի մի, որոց մէջն կինք և մէք, այսինքն է նոյն գպրոցի Օրիորդաց Գերմաններէն լեզուի գաստիարակութիւնն, որն որ ամեն մէկ հարցով՝ բողորովին օտարոտի է, աւելորդ և անտեղի, ու չէ արժան երեւք ի զեռաթեք կամ Հայ կուտանւոյն՝ տպաւորացուցանել մի այնպիսի լիզու՝ որ բողոր Ուուսաստանին, և Ուուսարբնակ համազգեաց ուղղահայեաց դրութեանցն նայերով՝ ճանապարհի վրայ ալ ձգուած լինի՝ մէք զանիկ չպիտի վերցնենք, ուր թէ այսպիսի ծանր պարագաներով Հայկական սրտին և հոգոյ հետ շաղկապել, և տարրացուցանել զայն նոցա հոգեկան ըմբռնմանց մէջ՝ ուսկից յառաջ կուզան բարցոյական և մուաւոր չարիք, և Հայոց ողջամիտ և ուղղափառ Կրօնից ընդդէմ մոլութիւնք և մոլար զառեղծուածք. և այս ցաւոպի դէպքով ևս Հայ աղջկանց թանկագին սուզ օրենքն կոյր զկուրայն կորսնցունել տալ:

Եղիշէ Հարժապէտ Մէծապատիւնեանց.

Ի 15 - ն Յ-Ն-Է-Ն-Է-Ն- 1871 - ի
Ի Ա. Է-Հ-Ի-Շ-Ի-:

ՍՈՒՐՃԱՆԴԱԿ ԲԻՒԶԱՆԴՆԵԱՆ

ՄԻ ՀԵՇԽԻՑԻՆ ՅԵՐԱԿԱՆԱԿՄ

ԱՅումները Զիթնեաց լերան վրայ, Համբարձ ման տաճարէն սակաւ ինչ հեռի, զնտին զնելով՝ մօտ օրերս կամեցան շնէք կառուցանել. և մինչ զեռ կը փորէին գետինը՝ Հայկական սրանչելի հընութիւն մի երեւան ելաւ. Այս հնութիւնն է միւսիոնէ (մօզաիք) պատրաստուած տապան մի, որուն վրայ կան քանի մի խորհրդանշաներ՝ սագ, արագաղ ձուկն և հետևեալ տապանագրը. ԱՅՍ Ի ԳԻՒ ԵՐԱԿԱՆԵԼԻՈՅՑ ՇԱՏԸՆԿԱ ՄԱԱՐՆ (մօլըն) ԱՐՏԵՎԱՆԱՅՑ, ՀԱՅԻ Ֆ.Ը.:

Այս տապանագրէն, որ ըստ ամենայնի անխախտ է և հայկական թուական չունի, պարզապէս կերեւի, որ 55 էն, այսինքն Հայկական թուականի սահմանուելէն, առաջ է, Բաց ի տապանէն կերեւին նաև շքեղ սալայատակներ և այլ թեկոններ, ուրոնք թուակ թէ մէք մեր նախարարազուն իշխանաց տոհմական վանուց մէկուն մասցորդներն են, որոց վրայ կը խօսին հայ պատմագիրք:

Այս հնավարը տառկաւին ամբողջապէս փռուած չը լինելով՝ առայժմ՝ համառօտի կանցնինք, խոստանալով ուրիշ անգամ աւելի մանրամասն տեղեկութիւններ հաղորդել մեր ընթերցողներուն։

(Արօն)

ԳԻՇԵՐՕԹԻԿ ՎԱՐԺԵՐԱՆՔ

Ամեն ձեռնարկութիւն՝ նիւթական կամ բարոյական շահ մարդու կամ բարոյական ունի, Պատիւ, փառք, բարի համբաւ կամ նիւթական օգուտ։ Առանց այս շարժառիթներուն ու ոք գործի մը կը ձեռնարկէ։

Կան մարդիկ որք բարոյական շահը նիւթական էն աւելի կը յարգնն. ոսց ասոնք բացառութիւն են. ընդհանրապէս նիւթական շահը բարոյականէն աւելի հրապրու աւելի աղբեցութիւն ունի մարդոց բնութեան վրայ. ուստի և առաւելի զօր շարժառիթ մ' է մարդկային ձեռնարկութեանց։

Ըստ մեզ՝ բարի օգտակար և միշտ ապահով է այն ձեռնարկութիւնը, որոյ մէջ նիւթական շահ բարոյականին հետ կը լծորդի և այս երկու շարժառիթի միասին կը գործնն։

Այս նկատմամբ կը գովենք աղբայնոց ոմանց այս օրերս զիշերօթիկ վարժարաններ բանալու ձեռնարկութիւնը. Կ. Փանոսեան էֆենտի, և Օրիորդ Սինեմ Օսկանեան, շահու և միանգամայն պառուց շարժառիթներէ զրոյնալ մէկը մանչ տղայոց միւսն ալ աղջկանց զիշերօթիկ վարժարաններ բանալու ձեռնարկած են։

Ըստ աջին արդէն Ըգաւայեան վարժարանի երկամայ տնօրէնութեամբ և մատակարարութեամբ բառականին փորձառութիւն ստացած լինելով, եթէ իր բաժ յայտարարութեան համեմատ, զարլարդոյս վերջն երեսը զրած ենք, յաջողի իր այս նոր ձեռնարկութիւնը յառաջ տանիլ, աղջին կարեռ ծառայութիւն մը մատուցանելէ զատ, ինչպէս ինքն ալ կօսէ, փառք և ստակ ալ կը շահի։

Երիտրոց, Օրիորդ Սինեմ Օսկանեան, Ընդդիական վարժարանի մէջ կրթութիւն առած, Հայերէն և Անդրէնի լիլուաց հմուտ, եօմն տարի վարժուհութիւն բրած է ալ և ալ վարժարանաց մէջ, զիշերօթառէս ի Տրապիզոն, ուր Յ տարի շարունակ կեցած և 300 էն աւելի մանկունք յաստիարակած է, և Այս հանգամմանքներն և իր վկայեալ համեստութիւնն ու բարեկրթութիւնը բաւական են կատարեալ վատահութիւն աղջիու հայ ծնողաց։

Ասոր ալ յայտարարութիւնը լուղբոյս վերջին երեսը կը տեսնեն ընթերցողք։

Նշանակութեան արժանի է Օրիորդին յայտարարութեան այն մասը. ուր կը ծանուցանէ թէ սովորական ուսումնական բնութեան գաղութ նաև առտնին տնտեսութիւն պիտի ուսուցանէ, որ զաստիարակութեան ամենակարեւոր մասն է ապագայ տանտիկնաց համար։

Մեր կողմէ յաջողութիւն մազթելով այս ձեռնարկութեանց, կը յուսանք և մանաւանդ կը փափաքինը որ նմանօրինակ ձեռնարկութեանց քաջալեր լինին աղջին մէջ. ուրիշ ձեռնհաս և հրմուտ անձինք ալ առանձնաբար կամ ընկերութեամբ ուրիշ վարժարաններ բանան, և մէջինին մրցում մտնէ, որպէս զի իրար գերազանցեալ փութեավ զաստիարակութեան ամենակարեւոր զիտութիւնը զարգացնեն աղջին մէջ։

Մասիս թ. 1449 յուլ. 29

ՊԱՇՏՕՆԵԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻԿՆ

ՅՈՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԳԻԵ

Ի 19 յուլիսի: — Արովհետեւ Յակոբ վարդապետն Տ. Եւետիքեան որպէս երևի սնուտի պատճառաբերութեամբք ոչ յօժարելով կատարել զհրամանս ՕԿԱՅՐԱԳՈՅՆ ՀՈՊԼՈՐ Խշաննութեան զառաջինն վասն վանահայրական պաշտօնի ի վանս Եգուլեաց և զերկրորդն վասն կրօնուսուցութեան և քարոզութեան յԵկեղեցիս Կոր-Բայալղիտու լինի օրինակ անհազանդութեան այլոց միաբանից ԱՃ. ուսյ և ընդդիմութեան տնօրէնութեան Հոգեկոր ՕԿԱՅՐԱԳՈՅՆ Խշաննութեանն, ուստի և ըստ հաճութեան Ա ԵՀԱՎԻԱ Կաթողիկոսի ամենայն Հայոց Ոինօդս ենթադատէ յԵտենի Ոինօդիս վերառեալ զվեղար նորա թողուլ ի կարգի քահանայութեան և հանեալ զնա ի վանիցութոյլ տալ բնակիլ անդ, ուր ձեռնարկեալ բնակիլ անդ, ի քահանայութիւն. այնու զի եթէ ժողովրդականք տեղույն կամիցին ընդունել զնա իրբեւ քահանայ։